

## **ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի**

կողմից 2015 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացվել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն: Անհրաժեշտության դեպքում նրանք հերթագրվել են մարզպետի, մարզպետի տեղակալների և աշխատակազմի ղեկավարի մոտ ընդունելության: Մարզպետի մոտ տարբեր հարցերով ընդունելության մասնակցել են 1188 քաղաքացի, համապատասխան վարչությունների և բաժինների պետերին քաղաքացիների բողոքների և խնդիրների պարզաբանման նպատակով տրվել են հանձնարարականներ: Մարզի և Հանրապետական ՋԼՄ-ների տեղեկատվական թողարկումներում եթեր հեռարձակված և տպագրված բնակչությանը հուզող հարցերի վերաբերյալ ամենօրյա տեղեկատվություն է ներկայացվել մարզպետին, մարզպետի տեղակալին և աշխատակազմի ղեկավարին, ինչպես նաև թեժ գծով ստացված քաղաքացիների բողոքների կապակցությամբ տրվել են համապատասխան հանձնարարականներ: Պատրաստվել և ՋԼՄ-ներին մշտապես ներկայացվել է մարզպետի ուղերձները, շնորհավորանքները, աշխատակազմի վարչությունների և բաժինների կողմից ներկայացված հայտարարությունները, ինչպես նաև այլ կարգի հեռարձակման անհրաժեշտ նյութեր: Պատրաստվել են տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, ուղերձներ, թարգմանություններ և այլ գրություններ:

Հանրային իրազեկման նպատակով ապահովվել է ՋԼՄ-ների մասնակցությունը մարզպետարանի աշխատակազմի կողմից կազմակերված միջոցառումներին, մարզի խորհրդի նիստին, տրամադրելով նրանց անհրաժեշտ տեղեկատվություն: Մարզպետարանի կայքէջում մշտապես տեղադրվել է տեղեկատվություն և պարբերաբար կատարվել համապատասխան փոփոխություններ: Տեղադրվել են մարզպետի որոշումները, կազմադրությունները, ինչպես նաև համայնքների ղեկավարների ու ավագանիների որոշումները: Մարզխորհրդի նիստերի օրակարգը և արձանագրությունները տեղադրվել են մարզպետարանի կայքէջում, նիստերին մասնակցելու համար մշտապես տեղեկացվել են մարզում գործող, ինչպես նաև հանրապետական լրատվամիջոցների բոլոր

ներկայացուցիչները: Մարզպետի մասնակցությամբ տեղի են ունեցել թվով 16 մամուլի ասուլիսներ: Հանդիպման ժամանակ մարզպետը ներկայացրել է կատարած աշխատանքները և նախատեսվող ծրագրերը, ինչպես նաև պատասխանել լրագրողների հարցերին: Աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերի կողմից պարբերաբար կազմակերպվել են հարցազրույցներ ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ մարզպետարանի աշխատանքային ծրագրերը լուսաբանելու նպատակով: Բաժնի աշխատակիցները մասնակցել են միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված կլոր սեղան քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին, աջակցել այդ կազմակերպությունների կողմից միջոցառումների անցկացմանը և իրականացվող ծրագրերին՝ /18.03.2015թ/- մասնակցություն Ասիական Չարգացման Բանկի /ԱԶԲ/ ներկայացուցիչների և մարզի համայնքների ղեկավարների հետ «Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ազգային ռազմավարական ծրագրի» շրջանայնորում կազմակերպված միջոցառմանը: /11.06.2015թ/- մասնակցություն Գյումրիում ՌԴ Գլխավոր հյուպատոսարանի կողմից կազմակերպած ՌԴ Անկախության օրվան նվիրված միջոցառմանը: /08.07.2015թ/- մասնակցություն Եվրոպական Միության և Ավստրիական զարգացման գործակալության (ADC) կողմից ֆինանսավորվ «Կանաչ էներգիան» հանուն Շիրակի մարզում «կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի ծրագրի տեղեկատվական հանդիպմանը: /31.07.2015թ/-մասնակցություն Հայաստանում Եվրոմիության պատվիրակության ֆինանսավորմամբ «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի» ծրագրի մեկնարկին: /01.08.2015թ/ - մասնակցություն «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված Երկաթուղայինի օրվան նվիրված միջոցառմանը: /15.09.2015թ/-մասնակցություն «SPFA» ֆրանսիական կազմակերպության կողմից մարզի Մայիսյան համայնքում կառուցված Էմանուել Մանդոնի անունը կրող «Բարեկամության խաղահրապարակ»-ի հանդիսավոր բացման արարողությունը: /11.12.2015թ/-մասնակցություն Իտալիայի Պատվավոր հյուպատոսի գրասենյակում կազմակերպված «Արշավախումբը լուսանկարչի աչքերով >> ցուցահանդեսի բացմանը:/ 17.12.2015թ/-մասնակցություն ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության դեսպանության, «Ֆայդեք Արմենիա» հիմնադրամի և Շիրակի մարզպետարանի աջակցությամբ կազմակերպված արգենտինական «Մետեգոլ» անիմացիոն ֆիլմի ցուցադրմանը: /15-16

2015թ / - մասնակցություն <<Հանրային իրազեկումը, որպես աղետների ռիսկի նվազեցման անկյունաքար>> 3-րդ միջազգային համաժողովին:

<< Շիրակի մարզպետը աշխատանքային և ճանաչողական հանդիպումներ է ունեցել Գյումրիում ՌԴ Գլխավոր հյուպատոս Եվգենի Կոնիշեվի հետ /13.01.2015թ/, ՌԴ-ից ժամանած մի խումբ պատգամավորների՝ <<Եդինայա Ռոսիա>>-ից խորհրդարանական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման կոմիտեի անդամ Բորիս Ռեզնիկի, ԱՊՀ գործերի կոմիտեի փոխնախագահ Օլեգ Լեբեդևի, նույն կոմիտեի անդամ Իրինա Ռոդնինայի եւ Պետդոմայի նախագահի խորհրդական Միխայիլ Կրոտովի, ինչպես նաև << ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովի հետ /23.01.2015թ/, Խորհրդային Միության և ՌԴ հերոս, հանրահայտ բևեռախույզ աշխարհագրական գիտությունների դոկտոր, ՌԴ բնական Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ, Պետական ծովային ակադեմիայի պատվավոր պրոֆեսոր Արթուր Չիլինգարովի և ռուս լրագրող, <<Ռուսաստանն այսօր>> միջազգային տեղեկատվական գործակալության գործադիր տնօրեն Դմիտրի Կիսիլյովի հետ/ 25.02.2015թ/, Թուրքմենստանի մշակույթի նախարարի տեղակալ Բախարգուլ Աբդիևայի գլխավորած պատվիրակության հետ /28.03.2015թ/, ՌԴ Պետական Դոմայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի նախագահ Լեոնիդ Սլուցկու գլխավորած պատվիրակության հետ/ 29.03.2015թ/, <<Ռում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Թիան Էրլուի գլխավորած պատվիրակության հետ /27.04.2015թ/, <<Ռում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ռիչարդ Միլսի հետ /21.05.2015թ/, Գյումրի ժամանած ՉԺՀ Շանսի նահանգի Սիան քաղաքի քաղաքապետ Դոն Ցզյունի գլխավորած պատվիրակության հետ /08.06.2015թ/, <<Ռում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գոնսալո Ուոլոլաբեիտիայի հետ /16.06.2015թ/, Ինսբրուքի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հասսըլի գլխավորած պատվիրակության հետ <<Կարիտաս>> Ավստրիա /02.09.2015թ/, Շիրակի մարզպետի հանդիպումը <<Ռում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ռիչարդ Միլսի հետ, մասնակցություն Գյումրու նոր վերանորոգված երիտասարդական պալատում գյումրեցի գեղանկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Ռաֆայել Աթոյանի՝ ռեստավրացիայի ենթարկված «Ջրաղացի ճանապարհին» որմնանկարի բացման արարողությանը/09.11.2015թ/, Հոլանդական

<<Ալվան ծաղիկ>> հիմնադրամի տնօրեն Ռենե Բեռնքի հետ /26.10.2015թ/, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ժան-Ֆրանսուա Շարպանտիենի հետ /13.11.2015թ/, ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ռիչարդ Միլսի հետ, մասնակցություն Գյումրու Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության վերանորոգված հատվածի բացման հանդիսավոր արարողությունը: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ դեսպանատան Ռազմական համագործակցության գրասենյակի կողմից /25.11.2015թ/, ՀՀ-ում Եվրոմիության պատվիրակության ղեկավար, Արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Սվիտալսկու հետ /27.11.2015թ/, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ԵԽ փորձագիտական խմբի (ԳՐԵՏԱ) պատվիրակության ներկայացուցիչների հետ /16.12.2015թ/:

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի  
տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի  
բաժին